

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-534-23.05.2014-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկզբունքորեն կողմ է ներկայացված օրենքի նախագծին: Միաժամանակ, օրենքի նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության պահանջները չեն վերաբերում ուսումնական հաստատության ուսումնամեթոդական ապահովվածությանը: Ուստի, առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածը հանել:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության  
բնագավառում կարգավորման**

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման  
ազդեցության գնահատման**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել համապատասխան պատժամիջոցներ՝ իրավաբանական անձանց կողմից իրականացվող կրթական գործունեության լիցենզիայի պարտադիր պայմանների և պահանջների, ինչպես նաև ՀՀ օրենսդրության խախտումների դեպքում:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## Եզրակացություն

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի  
նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման  
ազդեցության գնահատման**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի  
նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման**

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով նախատեսվում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ արեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում դադարեցնել բարձրագույն ուսումնական հաստատության լիցենզիայի գործողությունը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### **“Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

“Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի Նախագծով, մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը զրկվում է տրամադրված լիցենզիայից բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեությունը վերսկսելու դեպքում լիցենզիայից զրկված բարձրագույն ուսումնական հաստատությունը պարտավորված կլինի ևս մեկ անգամ պետական բյուջե վճարել պետական տուրք, իսկ գործունեությունը չարտնակելու դեպքում վերջինս չի վճարի մինչև այդ պետական բյուջե վճարվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների ոչ նշանակալի փոփոխության, իսկ ՀՀ պետական բյուջեի ելքերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-534-23.05.2014-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 13.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով կատարված ցանկացած խախտման դեպքում, բացառությամբ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքերի,»:

**Հոդված 2 .** Օրենքի 13.1 հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր 10-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների պաշտպանության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Իրավական ակտի հիմնավորումը**

**1. Անհրաժեշտություն**

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով գործունեության լիցենզիայի պայմանների եւ պահանջների ինչպես նաեւ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության եւ դրանք չպահպանելու դեպքում պատժամիջոցների կիրառման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Նախագիծն ընդունվում է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» եւ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքների համապատասխան:

**2. Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները**

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով գործունեության լիցենզիաների պայմանների եւ պահանջների ինչպես նաեւ օրենսդրական պահանջների խախտումների դեպքում պատժամիջոցների կիրառումը նախատեսված է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, սակայն բնագավառի առանձնահատկությունները դարձնում են դրանք անարդյունավետ, այդ իսկ

պատճառով դրանք ամրագրվում են «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականություն**

Բարեփոխումների համատեքստում իրականացվող քաղաքականության նպատակը կրթության որակի ապահովման երաշխիքների նոր գործիքակազմի բարելավումն է՝ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում բարձրագույն ուսումնական հաստատությունների անօրինական գործունեության նկատմամբ զսպող մեխանիզմների կիրառման միջոցով:

### **4. Կարգավորման նպատակը եւ բնույթը**

Նախագծի նպատակն է իրավաբանական անձանց կողմից իրականացվող կրթական գործունեության լիցենզիայի պարտադիր պայմանների եւ պահանջների այդ թվում ՀՀ օրենսդրության խախտումների դեպքում սահմանել համապատասխան պատժամիջոցներ՝ ընդհուպ մինչեւ լիցենզիայի գործողության դադարեցում՝ նպատակ ունենալով բարելավել ուսումնական հաստատություններում կրթական գործունեության անհրաժեշտ պայմաններն ու ուսուցման որակը:

### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված գերատեսչությունները ինստիտուտներն ու անձինք**

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ

### **6. Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ, լիցենզիայի պայմանների եւ պահանջների եւ ՀՀ օրենսդրության խախտումների դեպքում, պատժամիջոցների կիրառումը կնպաստի բարձրագույն կրթության բնագավառում իրականացվող կրթական գործունեության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը՝ էապես բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման արդյունավետությունը: